«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ N 111-Լ

ք. Երևան 07 փետրվարի 2025թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 21-Ի N48-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները, ղեկավարվելով «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ Ինստիտուտ) կանոնադրության 49-րդ կետի 14-րդ ենթակետի և Ինստիտուտի Գիտական Խորհրդի աշխատակարգի 20-րդ կետի 15-րդ ենթակետի, 77-րդ և 78-րդ կետերի դրույթներով՝ Ինստիտուտի Գիտական Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի Գիտական Խորհրդի 2023 թվականի ապրիլի 21-ի ««Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» Հիմնադրամի Մագիստրոսական թեզի գրախոսման, գնահատման և բողոքարկման ընթացակարգը հաստատելու մասին»» N48-Լ որոշման հավելվածի 2"2 կետի 3-րդ պարբերության «նվազագույնը 60-80 տպագրական էջ՝» բառերը փոխարինել «նվազագույնը 45 (քառասունհինգ) տպագրական էջից՝» բառերով:

2. Սահմանել, որ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի ուսանողի ավարտական աշխատանքը պետք է կազմված լինի նվազագույնը 25 (քսանհինգ) տպագրական էջից, A4 չափի սպիտակ թղթի վրա, միակողմանի գրվածքով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի փետրվարի 10-ից:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ, ՌԵԿՏՈՐ ՏԻԳՐԱՆ ՍԻՄՈՆՅԱՆ